

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՓՆՅԱԿ ԵՎ
ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ԴԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐքի 213-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ և
ՀԱՄԱՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

5 ապրիլի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Տարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի,
Ա. Խաչարյանի, Վ. Շովիաննիսյանի (զեկուցող), Ռ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ գործով որպես պարասփանող կողմ ներգրավված՝ ՀՀ
Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի
խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ
հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի
25 և 71-րդ հոդվածների,

դռնբաց դադարական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի
Հանրապետության Երեւան քաղաքի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների
ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի
213-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապա-
տափափանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ Երեւան քաղաքի Աջափնյակ եւ Շավաշաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 09.11.2010թ. սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պարախանող կողմերի գրավոր բացաբրությունները, հետապնդումը ՀՀ քրեական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. ՀՀ քրեական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003թ. ապրիլի 18-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003թ. ապրիլի 29-ին եւ ուժի մեջ է մտել 2003թ. օգոստոսի 1-ից:

ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Վաշխառությունը» վերպառությամբ 213-րդ հոդվածը սահմանում է.

«1. Վաշխառությունը՝ պարզ տրված դրամի կամ դրևակային հավկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենդրոնական բանկի սահմանած բանկային փոկուսի հաշվարկային դրույքի կրկնապարիկը գերազանցող չափով փոկուսներ սպանալը, ինչպես նաև անձի հետ նրա համար ծայրահետ ոչ ձեռնորու պայմաններում այլ գործարք կադրելը, որից օգնվել է մյուս կողմը՝

պարմվում է փուգանքով՝ նվազագույն աշխարհավարձի երեքհարյուրապարիկից հինգհարյուրապարիկի չափով, կամ ազարագրկմամբ՝ առավելագույնը երկու դարի ժամկետով:

2. Նույն արարքը՝

- 1) որի հետեւանքով վուժողն ընկել է նյութական ծանր կացության մեջ,
- 2) որը կապարվել է որպես արիեսպ,
- 3) որը կապարվել է վուժողի անչափահաս լինելը կամ մրավոր զարգացման թերություններն օգնագործելով՝

պարմվում է փուգանքով՝ նվազագույն աշխարհավարձի չորսհարյուրապարիկից վեցհարյուրապարիկի չափով, կամ ազարագրկմամբ՝ առավելագույնը չորս դարի ժամկետով»:

2. Սույն գործի դատավարական նախապարմությունը հանգում է հետեւյալին.
ՀՀ ոսպիկանության ՔԳՎ Երեւան քաղաքի քննչական վարչության Մաշտոցի

քննչական բաժնի կողմից հարուցվել եւ քննվել է թիվ 10128209 քրեական գործը: Հարուցված քրեական գործի շրջանակներում որոշում է կայացվել Վ. Ազիզյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին եւ նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով: 2010թ. մարտի 1-ին քրեական գործն ուղարկվել է Երևան քաղաքի Աջափնյակ եւ Դավթաշեն համայնքների վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որի կողմից նույն թվականի մարտի 3-ին քրեական գործն ընդունվել է վարույթ: 03.11.2010թ. դատավոր Վ. Ռշտոնին կայացրել է քրեական գործի վարույթը կասեցնելու եւ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին որոշում՝ վիճարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի սահմանադրականությունը:

3. Դիմողը, պնդելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածը հակասում է ՀՀ Սահմանադրության 3, 14.1, 18 եւ 31-րդ հոդվածներին, որպես վիճարկվող հոդվածի հակասահմանադրականության հիմնական փաստարկ վկայակոչում է, նախ՝ այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305 եւ 313-րդ հոդվածներով արդեն իսկ նախադեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածով նախադեսված եւ քաղաքացիահրավական պայմանագրի հիման վրա կարարվող վաշխառության երկընդունելի արարքների համար քաղաքացիահրավական պարագաներու մասին արձակություն, եւ երկրորդ՝ պետքության կողմից պաշտպանվող դիմումը արձակության շահերի դեմ ուղղված՝ կամովին երկկողմ պայմանագիր կնքելու դեպքում օրենդիրը քրեական պարագաներու մասին արձակությունը կողմերից միայն մեկի՝ փոխարքուի համար, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով ամրագրված՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը:

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերին եւ հղում կարարելով ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածին, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածին՝ դիմողը գրնում է, որ օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում՝ «ծանր կացություն» եզրույթը, 2-րդ մասի 2-րդ կետում՝ «որը կարարվել է որպես արիեսպ» բառակապակցությունը չեն բխում իրավական որոշակիության սկզբունքից: Ըստ դիմողի՝ օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում՝ «ծանր կացություն» եզրույթը խիստ գնահատողական է, բազմիմասք, իսկ 2-րդ մասի 2-րդ կետում՝ «որը

կափարվել է որպես արհեստ» բառակապակցությունն առաջադրում է հարց, թե ՀՀ կենդրոնական բանկի սահմանած բանկային փոկոսի հաշվարկային դրույքի կրկնապափիկը գերազանցող փոկոսադրույքով պարբերաբար գումարներ փրամադրող անձին պետք է ենթարկել վարչական պարասխանափության՝ ապօրինի ձեռնարկափիրական գործունեություն ծավալելու համար, թե քրեական պարասխանափության՝ վաշխառությունը որպես արհեստ կափարելու համար: Իսկ եթե՝ քրեական պարասխանափության, ապա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասով, 188-րդ հոդվածով, թե երկու հոդվածներով միաժամանակ:

4. Պարասխանողը գգնում է, որ վիճարկվող նորմերը համապարասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ հետեւյալ պարագաներությամբ: «Վաշխառության քրեականացումը պայմանափորված է գործունեության այս դեսակը քրեականացնելու եւ դրա դեմ քրեափիրավական մեթոդներով պայքարելու հանրային պահանջով, որի հիմքում նախ եւ առաջ ընկած է արարքի հանրային վրանգավորության եւ արարքի նկարմամբ սոցիալական վերահսկողության այլ միջոցների համեմապությամբ դրա քրեականացման նպատակահարմարության հիմնավորումը: Արարքի քրեականացումը հասարակական հարաբերությունների կարգավորվածությունն ապահովող առավել ընդհանուր սոցիալական գործընթացի՝ սոցիալական վերահսկողության համակարգի գործը է: Վաշխառության քրեականացումը համարժեք պարասխանն է այն վնասին, որը գործունեության այս դեսակը հասցնում է մի կողմից դնդանական հարաբերություններին, մյուս կողմից նպաստում այլ՝ առավել վրանգավոր հանցագործությունների կափարմանը»: Պարասխանողը նաեւ պնդում է, որ վաշխառության քրեականացումն ունի նաեւ կանխիչ նշանակություն, քանի որ քրեափիրավական արգելքի բովանդակությունը հասարակական գիրակցության մեջ արմադրավորելու, հանցավոր վարքագծի կարծրագիտեր ձեւավորելու միջոցով իրականացվում է ինչպես գործունեության այս դեսակի կանխման գործառույթ, այնպես էլ կանխվում են հասարակական ավելի մեծ վրանգավորություն ունեցող հանցագործությունները, որոնք վաշխառության անմիջական հետեւանք կարող են լինել:

5. Վիճարկվող հոդվածը գերեւոված է ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները» վերառությամբ 22-րդ գլխում: Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների

հանրային վրանգավորությունը՝ հավկապես վերափոխվող դնդեսական համակարգերի համար, դրսեւորվում է նրանում, որ դրանք խախուսում են դնդեսության ոլորտի իրավակարգը, դնդեսական շրջանառության առանձին մասնակիցների, հասարակության, պետքության դնդեսական շահերը, գույքային վնաս են պարճառում դնդեսավարող սուբյեկտներին եւ առանձին քաղաքացիների:

Վաշխառության հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսեւորվում է երկու արարքով, որոնցից թեկուզեւ մեկի կարարումը բավական է արարքը հանցագործություն որակելու համար: Այն է՝ առաջին՝ պարզք դրված դրամի կամ դեսակային հավկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենդրունական բանկի սահմանած բանկային վոկոսի հաշվարկային դրույքի կրկնապարփկը գերազանցող չափով վոկոսներ սրանալը, եւ երկրորդ՝ անձի հետ նրա համար ծայրահետ ոչ ձեռնպու պայմաններում այլ գործարք կարարելը, որից օգնութեալ է մյուս կողմը:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը դրսեւորվում է ուղղակի դիմավորությամբ:

Հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ 16 տարին լրացած մեղաստնակ ֆիզիկական անձը:

« քրեական դարավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկվող՝ « քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախադեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են դրուժողի բողոքի հիման վրա, եւ կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշվելու դեպքում ենթակա են կարճման:

« քրեական դարավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ « քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասով նախադեսված հանցագործությունների, այսինքն՝ ծանրացուցիչ հանգամանքներում կարարված վաշխառության վերաբերյալ գործերը համարվում են հանրային հետապնդման գործեր:

6. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դարարանը, հաշվի առնելով նաև դիմողի հարցադրումները, հարկ է համարում օրենսգրքի վիճարկվող դրույթները դիմավորեալ « քրեական եւ քաղաքացիական օրենսդրության խնդիրների համարեցարում:

« քրեական օրենսգրքի՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրները» վերդառությամբ 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի խնդիրներն են, ի թիվս այլնի, հանցավոր ովնագություններից մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազա-գությունների պաշտպանությունը, հանցագործությունների կանխումը:

« քաղաքացիական օրենսգրքի՝ «Քաղաքացիական օրենսդրության սկզբունքները» վերդառությամբ 3-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների վերլու-ծությունը թույլ է փալիս բացահայտել նաև « քաղաքացիական օրենսդրության խնդիրները: « քաղաքացիական օրենսդրության խնդիրներն են, ի թիվս այլնի, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացումը, խախտված իրա-վունքների վերականգնման եւ դրանց դարպական պաշտպանության ապահովումը:

« քրեական եւ քաղաքացիական օրենսդրության խնդիրների համադրված վերլուծությունից բխում է, որ քրեական օրենսդրության միջոցով օրենսդիրն իր առջև դրել է հանցագործությունների կանխման միջոցով հանցագործությունների հետեւանքով իրավունքների եւ ազագությունների խախտումների կանխման խնդիր, իսկ քաղաքացիական օրենսդրության դեպքում օրենսդիրն իր առջև դրել է խախտված իրավունքների վերականգնման ապահովման խնդիր, ինչը նշանակում է, որ « քաղաքացիական օրենսգրքում առկա են քաղաքացիական իրավունքների խախտման դեպքում քաղաքացիական դարպարության կարգով նշված իրավունք-ների վերականգնման համար նախադրյալներ հանդիսացող նորմեր: Վյդիսիք են, մասնավորապես, դիմողի կողմից վկայակոչված՝ « քաղաքացիական օրենսգրքի 305 եւ 313-րդ հոդվածները, որոնք նախադրյալներ են հանդիսանում օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապարասիանող գործարքի կամ սպրկացուցիչ գործարքի հետեւանքով խախտված իրավունքները քաղաքացիական դարպարության կարգով վերականգնելու համար:

Ինքնանպարակ չէ այն հանգամանքը, որ, ի գարբերություն « քաղա-քացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, որին օգտագործվում է «խախտված իրավունքների վերականգնման» բառակապակցությունը, « քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում է «պաշտպանել իրա-վունքները» բառակապակցությունը, ինչը նշանակում է, որ քրեական օրենսդրությունն ունի նախականիսից նշանակություն եւ քրեական օրենսդրության միջոցով օրյեկտիվորեն հնարավոր չէ վերականգնել արդեն իսկ խախտված իրավունքները:

Այդ է պարզառը նաեւ, որ օրենսդիրը ՀՀ քրեական դադավարության օրենսգրքում նախադեսել է քրեական դադավարությունում քաղաքացիական հայցի ինսպիրուտուր, որի միջոցով գործնականում ապահովվում է հանցագործության հետեւանքով խախփված իրավունքների վերականգնումը:

Վերոգրյալից բխում է, որ կոնկրետ արարքի համար միաժամանակ քրեական եւ քաղաքացիական պարասխանագրվություն սահմանող նորմերն ունեն դարբեր առարկաներ, եւ դրանց միջոցով օրենսդիրը լուծում է դարբեր խնդիրներ. քաղաքացիական պարասխանագրվության սահմանումը չի բացառում քրեորեն պարմելի արարքի համար պարասխանագրվության սահմանումը:

Հնդ որում, այս կամ այն արարքի հանրային վգանգավորության գնահապումը եւ դրա քրեականացումը գիրնվում են օրենսդիրի բացառիկ իրավասությունների փիրույթում՝ հաշվի առնելով խնդրի համակարգային լուծումը եւ ելնելով վարչական, քաղաքացիական եւ քրեական պարասխանագրվության հսկակ դարանջապման ու համադրված կանոնակարգման անհրաժեշտությունից:

Օրենսդիրն իրավակիրառողին չի ընձեռում քաղաքացիական եւ քրեական պարասխանագրվություն սահմանող նորմերի միջև ընդունակություն կատարելու հնարավորություն: Սահմանադրական դադարանք, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախադեսված արարքի վերաբերյալ գործերը հանդիսանում են մասնավոր հետքապնդման գործեր, արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախադեսված արարքի առկայության դեպքում գործարքի կողմ հանդիսացող մասնավոր անձին է հնարավորություն վերապահված ընդունակություն կատարելու նշված արարքը կատարած, գործարքի մյուս կողմ հանդիսացող մասնավոր անձին քաղաքացիական պարասխանագրվության ենթարկելու համար հայց կամ քրեական պարասխանագրվության ենթարկելու համար համապատասխան հայդարարություն ներկայացնելու միջև: Բոլոր դեպքերում, օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարք կնքած անձը կարող է եւ պարտավոր է իմաստ, որ դաշտավայր արարքի համար սահմանված է ոչ միայն քաղաքացիական, այլ նաեւ քրեական պարասխանագրվություն:

7. Ինչ վերաբերում է դիմողի այն հարցադրմանը, որ պետքության կողմից պաշտպանվող դադարության շահերի դեմ ուղղված՝ կամովին երկկողմ պայմանագիր կնքելու դեպքում օրենսդիրը քրեական պարասխանագրվություն է սահմանում կող-

մերից միայն մեկի՝ փոխադրուի համար, դրանով իսկ խախտելով ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով ամրագրված՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը, սահմանադրական դադարան արձանագրում է, որ նշված հարցադրումն անհիմն է: Սահմանադրական դադարան իր՝ 04.05.2010թ. ՍԴՈ-881 որոշման մեջ անդրադարձել է օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքի սահմանադրահրավական բովանդակության բացահայտմանը եւ հետևողականորեն առաջ է դարձել այն փեսակեպը, որ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը վերաբերում է համեմատելի իրավիճակներում գրնվող միեւնույն կապեգորիայի անձանց, մինչդեռ փվյալ դեպքում փոխադրուն եւ փոխառուն որակական դարձեր վիճակներում են:

8. Իրավական որոշակիության վերաբերյալ դիմողի հարցադրումների առնչությամբ սահմանադրական դադարանը, վերահասպարելով իր՝ ՍԴՈ-747 եւ ՍԴՈ-780 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները, սույն գործով կրկին անգամ ընդգծում է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացությունների բովանդակությունը, բնորոշ հավկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինասեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դադարական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կեպում՝ «ծանր կացություն» բառակապակցության եւ դրա բնորոշ հավկանիշների բովանդակության բացահայտմանը: Ընդ որում, նշված բառակապակցությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ենելով փվյալ գործի բոլոր կոնկրետ փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից: Գործը քննող դադարանն է իրավասու գնահատելու այս իրավիճակը եւ պարզելու, թե արդյո՞ք փվյալ անձը, կոնկրետ դեպքում՝ փոխառուն, գրնվել է ծանր կացության մեջ: Ինչ վերաբերում է օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կեպում՝ «որը կադարձել է որպես արհեստ» բառակապակցության վերաբերյալ դիմողի հարցադրմանը, ապա սահմանադրական դադարան արձանագրում է, որ դիմողը բարձրացնում է իրավունքի կիրառման հարց:

9. Սահմանադրական դադարան արձանագրում է, որ դիմողը, վիճարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածը՝ ամբողջությամբ, եւ պահպանելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները, չի անդրադարձել եւ որեւէ հիմնավորում չի ներկայացրել վիճարկվող հոդվածի 2-րդ

մասի 3-րդ կետի առնչությամբ, քանի որ այն կոնկրետ քրեական գործի շրջանակներում կիրառելի չէ:

Նշված հանգամանքը հիմք է դալիս եզրահանգելու, որ սույն գործի վարույթը ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի մասով ենթակա է կարճման՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով՝ որպես դպյալ կոնկրետ իրավանորմի սահմանադրականության հարցով ոչ իրավասու սուրյեկտի կողմից ներկայացված դիմումի հիման վրա քննության ընդունված գործ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դադարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 եւ 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Դիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները՝ գործի վարույթը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի մասով, կարճել:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՐ

Գ. ՏԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

5 ապրիլի 2011 թվականի
ՍԴՈ-947